

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 17

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

17. 06. 2016թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա. Դարբինյան - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
- Ա. Զանազյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Վ. Գևորգյանը, Վ.Դոխոյանը, - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օրակարգում`

1. Լոռու մարզում վերջին օրերին տեղացած անձրևների և կարկուտի հասցրած վնասների վերաբերյալ

Հանձնարարվեց`

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին`

Շրջաբերական գրությամբ դիմել համայնքների ղեկավարներին համայնքի տարածքում հեղեղատարների, սելավատարների և գետերի հունների մաքրման աշխատանքներ կազմակերպելու և անցկացնելու նպատակով, որպեսզի հնարավորինս բացառվեն հեղեղումներն ու փլուզումները:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Զանազյանին` Քամուց, անձրևներից և սելավներից համայնքային ճանապարհներին պատճառված վնասների վերաբերյալ համայնքներից ստացված տեղեկությունների և կատարված ուսումնասիրությունների հիման վրա ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ տարածքային կառավարման և զարգացման նախարարին, իսկ մարզային ենթակայության ճանապարհների վերաբերյալ նաև տրանսպորտի և կապի նախարարին:

/Ժամկետ` 1-օր/

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին`

Կարկուտի և ուժեղ քամիների հետևանքով մարզի համայնքների ցանքատարածքներին պատճառված վնասները գնահատելու նպատակով տեղերում կատարել ուսումնասիրություններ և ներկայացնել տեղեկատվություն ու առաջարկություններ:

/ Ժամկետ` 1 շաբաթ /

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՆԱԲԱՆԴՅԱՆ